ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/15312-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1048-10.04.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 392 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության ավագ մասնագետ
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1048-10.04.2025-**ՊԻ**-011/0) **ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է հետևյալը.

Նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 58-րդ հոդվածի 3-րդ մասում *«հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը» բառերը փոխարինել «թիկունքով դեպի հանձնաժողովը»* բառերով:

Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«3. Քվեարկության խցիկները տեղադրվում են միմյանցից առնվազն մեկ մետր հեռավորությամբ և այն դիրքով, որ ընտրողը քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով, և բացառվի թիկունքում մարդկանց տեղաշարժը, ինչպես նաև ընտրողի ազատ կամքի արտահայտման նկատմամբ վերահսկողության ցանկացած հնարավորություն:»:

Նախ հարկ ենք համարում նշել, որ Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 3-րդ մասում «և թիկունքով դեպի պատը» բառեր առկա չեն, ինչով պայմանավորված փոխարինվել չեն կարող:

Անդրադառնալով նախագծի բուն էությանը՝ հարկ է նկատել, որ ներկայացված օրենսդրական նախաձեռնության հիմնավորման համաձայն նախագծով առաջարկվում է քվեարկության սենյակում քվեախցիկները տեղադրվեն այն դիրքով, որ քվեարկելիս ընտրողը լինի թիկունքով դեպի հանձնաժողովը, և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք և հանձնաժողովի անդամները հնարավորություն ունենան տեսնելու, թե ինչ է կատարվում քվեախցիկի ներսում, մասնավորապես.

«անհնար կլինի նկարել քվեաթերթիկը կամ տեսանկարահանել քվեարկության գործընթացը»:

Գտնում ենք, որ առաջարկվող մոտեցումը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 7-րդ և Ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածներով երաշխավորված քվեարկության գաղտնիության սկզբունքի համատեքստում:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում կիրառվող քվեախցիկների առկա կառուցվածքի պայմաններում, ընտրողի քվեարկության գաղտնիությունն ապահովվում է միայն այն դիրքով, որը սահմանված է Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով, քանի որ քվեախցիկում գտնվելիս գաղտնիության ապահովման տեսանկյունից ընտրողի կամարտահայտման ակտը կարող է վտանգվել միայն թիկունքից, քանզի ընտրողի աջ և ձախ կողմերից և դիմացից քվեախցիկի պատերն ապահովում են քվեարկության գաղտնիությունը: Եթե հնարավորություն տրվի թիկունքից դիտելու ընտրողի քվեարկելու ընթացքը, ուղղակիորեն կխախտվի քվեարկության գաղտնիության սկզբունքը: Հետևաբար, քվեախցիկի դիրքի փոփոխության դեպքում ինքնին կիմաստազրկվի հենց քվեախցիկների տեղադրման պահանջը:

Ավելին, Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 11.1-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ իրականացվում է ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով: Սահմանված է, որ տեսանկարահանումը և համացանցային հեռարձակումը պետք է իրականացվեն Ընտրական օրենսգրքով սահմանված՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ: Տեսախցիկներն ունեն կադրը մոտեցնելու հնարավորություն և նման պայմաններում քվեարկության գաղտնիության խախտման վտանգը ծայրահեղ մեծ է:

Նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշվում է, որ եթե քվեախցիկները տեղադրվեն ընտրական գործընթացի մասնակիցներից պատշաճ հեռավորության վրա, ապա անհնարին կլինի նկատել, թե ընտրողն ինչպես է ընտրում:

Այս առումով հարկ է նշել սակայն, որ Հայաստանի Հանրապետությունում որպես քվեարկության սենյակ հատկացված տարածքները կարող են չապահովել նշված հնարավորությունը: Դրանից բացի, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք (վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները) ունեն ազատ տեղաշարժվելու իրավունք և կարող են լուսանկարել, տեսանկարահանել քվեարկության ընթացքը՝ չխախտելով

ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը: Նախագծով առաջարկվող քվեախցիկի դիրքի պայմաններում հնարավոր չի լինի միաժամանակ ապահովել պատշաճ հանրային վերահսկողությունն ու քվեարկության գաղտնիությունը:

Վերոնշյալի հաշվառմամբ գտնում ենք, որ նախագիծը սկզբունքորեն անընդունելի է:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1048-10.04.2025-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 3-րդ կետում «հանձնաժողովին դեմքով եւ թիկունքով դեպի պատը» բառերը փոխարինել «թիկունքով դեպի հանձնաժողովը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առկա վիճակը

Այս պահի կարգավորումների համաձայն քվեախցիկը քվեարկության սենյակում տեղադրվում է այնպես, որ ընտրողը մեջքով լինի դեպի պատը, իսկ դեմքով՝ դեպի հանձնաժողովը: Այս կարգավորումը նպատակ ունի ապահովել ընտրության գաղտնիությունը: Սակայն ակնհայտ է, որ ժամանակակից տեխնոլոգիաների պայմաններում գաղտնիության ապահովումը խոչընդոտվում է շատ էական եւ խնդրահարույց հանգամանքով: Այն է՝ ամենասովորական հեռախոսով քվեաթերթիկը լուսանկարելու, իսկ մի փոքր ավելի ֆունկցիոնալ հեռախոսով տեսանկարահանելու հնարավորությունը: Ցավոք սրտի, մեր հասարակության մեջ գոյություն ունեցող շատ բացասական դրսեւորումներ հնարավորություն են տալիս հավանական ընտրակեղծարարներին օգտվել ցանկացած հնարավորությունից: Յուրաքանչյուր ընտրող կարող է որեւէ մեկին խոստանալ իր ձայնը՝ կոնկրետ թեկնածուին կամ քաղաքական ուժին տալու, իսկ հետո ունենալով ազատության բավարար ապահովվածության ընտրությունը՝ կատարել իր խղճի եւ համոզմունքների համաձայն:

Վերը նշված հնարավորությունը կարող է էապես ազդել ընտրության վրա, որովհետեւ ցանկալի խոստումը լսելուց հետո հավանական ընտրակեղծարարը «կխնդրի» ընտրողին լուսանկարել քվեաթերթիկը եւ նույնիսկ տեսանկարահանել քվեարկության գործընթացը:

Ինչ է առաջարկվում.

Ըստ առաջարկվող փոփոխության քվեախցիկը պետք է տեղադրվի այնպես, որ ընտրողը քվեարկության պահին լինի թիկունքով դեպի հանձնաժողովը: Եվ եթե քվեախցիկները տեղադրվեն քվեարկության գործընթացին մասնակիցներից պատշաճ հեռավորության վրա, ինչն անհնարին կդարձնի նկատել, թե ընտրողը ինչպես է քվեարկում, ապա եւ քվեարկության գաղտնիությունը ապահովված կլինի եւ ընտրողի ազատ կամարտահայտումը: Այս դեպքում, գրեթե անհնար կլինի նկարել քվեաթերթիկը, կամ տեսանկարահանել քվեարկության գործընթացը, որն առավելագույնս կապահովվի քվեարկության գաղտնիությունը, թափանցիկությունը, եւ որ ամենակարեւորն է՝ ընտրողի ազատ կամարտահայտությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 392 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1048-10.04.2025-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ